կասի սահմաններում գրաւուած երկիրնե֊րում Վանի թագաւորները զինուորական բռնութիւններ են գործ դնում։ Ուգուրիեանինի երկրի տարածութիւնը մեծ չէր. դա ձգւում էր Մանըզարի հովտով դէպ ի հարաւ, հա֊գիւ մինչև Ադիեաման գետը, ըստ որում գորանից յետոյ մենք տեսնում ենք ուրիշ իշխանութիւններ Գեօկ—չայի հարաւային ե֊զերքում։ Այդ փաստերը առիթ են տալիս մեզ ենթադրելու, թէ Ուրարտեան ժամանակը հարաւ—արևմտեան եզերքը Գեօկ—չայի ու֊նէին խիտ ազգաբնակութիւն և կազմում էին անկախ, ուրոյն գաւառներ։

Աղամխանի արձանագրութիւնը [N. XVI]

1. Ազատ Խարդիացւոց
2. Սարդուրի, որդի Արգիշտիի,
3. ասում է՝ քաղաքը Տուլիհունի, քա֊ղաք արքայական,
4. Սինալիբիի, որդու Լուեըիի,
5. իբր աւար նուաճեցի. Սինալիբի
6. թագաւորի, արանց կանանց ես հա֊նեցի,
7. բաժանեցի երկրից Ուգուրիեանինի։

Ծարայարեկի

Ի. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑԻ

## ԱՆՏԱՌ

Աշնան վերջերում տերևներ դեղնած՝
Կատաղի քամուց շըշուկ են հանում.
Երկրի երեսը մառախուղ պատած՝
Երկընքից անվերջ անձրև է թափվում։

Մահուան դեղնութեամբ ծածկուած են դաշտեր,
Մարդկային սրտից չեն ցըրում վշտեր,
Ուր որ նայում ես – պատկե՛ր այլանդակ,
Կանգնած առաջըդ՝ ծըմե՛ռ դըժընդակ...

Ամեն տեղ տիրած լո՛ւռ ամայութիւն,
«Անապատ» կարծես ամբողջ բընութիւն...
Էլ չըկայ եռանդ, գործ ու աշխատանք,
Լո՛ւռ է աշխարհը, մեռա՛ծ է և կեանք....

Բայց հեռո՛ւ, մըռայլ, մո՛ւթ երկընքի տակ
Ծերուկ անտառը մըրափե՛ց[1] երկար.
Ուր խոր երազում — քաղց՛ր յիշատակ —
Տեսնում է դժնի նոր գարնան համար...։

—

## ԱՌԱԳԱՍՏ

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ[2]

Մառախուղի մէջ՝ ազատ ովկիանի
Մի առագաստ է միայնակ փայլում.
Ի՞նչ է թողել նա երկրում մայրենի,
Ի՞նչ է որոնում հեռո՛ւ աշխարհում....

Գոռում են ալիք ... քամու դղըրդիւն
Թեքում է կայմը, ուժգին ճարճատում.
Աւա՜ղ, չէ փընտրում նա երջանկութիւն,
Ոչ էլ երջանիկ կեանքից է խորշում...

Նըրա ներքևը — ջուրն համատարած,
Վերևն — արևի ոսկի ճառագայթ
Բայց նա խնդրում է մըրրիկ կատաղած՝
Կարծես նըրա մէջ կայ «հանգիստ» անխայթ...։

—

## ՆԱՒԱԿ

(ԽՐԱԽՈՅՍ ՆԱՒՈՐԴԻ)

Թո՛ղ մըռնչայ մեր ծով ահեղ՝
Բուռն փըրփուրներ շըթայած
Թո՛ղ ամպ գոռայ որոտալիր
Երկնից՝ սաստիկ կատաղած...

Ո՛րքան կուզի թո՛ղ մեր ծովը
Ալեկոծուի սաստկաբար.
Եւ մեզ, ինչպէս թեթև տաշեղ՝
Նետէ բըլուր, ժայռ ու սար...,

Գնա՛, շո՛ւտ նաւակ իմ քաջասիրտ
Պատռիր կուրծքը մեծ ծովի.
Արագասլաց թըռիչքներով
Դէպ ի հեռո՛ւն դու վազի։

Թըռի՛ր անվախ դէպ՝ առա՛ջ,
Խորտակելով ողջ ալեքը՝
Եւ կորովի, անհուն ուժով
Անցի՛ր դէպի Արևելք...
Անդ բացվում է Վառ արշալոյս
Լայն ասպարէզ Նոր կեանքի.
Դէ՛հ, քաջ Նաւակ իմ լիայոյս՝
Տուր նաւորդիս սիրտ, հոգի....

1. Այսինքն՝ խոր քնեց։
2. Ռուսաց յայտնի բանաստեղծ, Պուշկինից յետոյ երկրորդն է յիշվում։



digitised by A.R.A.R.@